



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ
Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 4/4**

«19» մայիսի 2023թվականի գ. Տեղ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԶՈՐՐՈՐԴ ՆՍԱՇՐՋԱՆԻ ԶՈՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ**

ՆԻՍՏԸ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ Է՝

Տեղի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար՝ Աստղիկ Ղարազյոզյանը

ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ՝

Տեղ համայնքի ավագանու թվով 8(ութ) անդամներ՝

1. Ղուլունց Դավիթ Արամայիսի
2. Միրզոյան Արամ Գագիկի
3. Ղուկասյան Արագած Արշավիրի
4. Միքայելյան Աննա Միքայելի
5. Սիմոնյան Լորա Ռաֆիկի
6. Առաքելյան Վահե Վարդանի
7. Դանիելյան Սևադավիտայիկի
8. Դալլաքյան Արման Յուրիկի

Բացակայում են Տեղ համայնքի ավագանու թվով 7(յոթ) անդամներ՝ Կարեն Բաղդասարյանը, Մասիս Զեյնալյանը, Արգամ Հովսեփյանը, Հայրապետ Հայրապետյանը, Նազիկ Բաղդասարյանը, Գևորգ Մարտիրոսյան և Ասպետ Գալստյանը, որոնց գրանցման արդյունքների վերաբերյալ հայտարարությամբ հանդես եկավ Տեղի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար՝ Աստղիկ Ղարազյոզյանը, ով միաժամանակ հայտարարեց, որ նիստին մասնակցում են ավագանու **թվով 8 (ութ) անդամները:**

ՆԻՍՏԻՆ ՀՐԱՎԻՐՎԱԾ ԵՆ՝

Համայնքի ղեկավարի խորհրդական Մարտունիկ Պողոսյանը, Տեղ համայնքի աշխատակազմի աշխատակիցներ և համայնքի բնակիչներ:

ԼՍԵՑԻՆ.

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 19-Ի ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ձեկուցող՝ Դ. Ղուկունց)

Ղեկավարելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 64-րդ և 65-րդ հոդվածներով համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2023 թվականի մայիսի 19-ի 4-րդ նստաշրջանի 4-րդ նիստի օրակարգը:

1. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) ստանալու նպատակով 2023 թվականի ծրագրային հայտերը ներկայացնելուն համաձայնություն տալու մասին :

2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 6-ի N 12-Ա որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին:

3. Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության կողմից իրականացվող <<Լավ կառավարում հանուն տեղական զարգացման հարավային կովկասում>> ծրագրի շրջանակներում գործադրվող՝ << համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման դրամաշնորհային հիմնադրամի միյոցով << համայնքներում ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակների տեղայնացմանն ուղղված դրամաշնորհային մրցույթին մասնակցելուն և համաֆինանսավորումը ապահովելուն համաձայնություն տալու մասին:

4. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 57-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին :

5. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու հերթական չորրորդ նստաշրջանի հինգերորդ նիստի գումարման օրը սահմանելու մասին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Կողմ - 8

դեմ - 0

ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ (ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐ) ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՅՏԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Ձեկուցող՝ Ռ. Շեգունց)